ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր

<<16>> մարտի 2020թ.

N 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ <<ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ>> ԴԵՊՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ,4-րդ կետերի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>>, <<ե>>, <<զ>> և <<է>> կետերի դրույթներով, հիմք ընդունելով ստեղծված իրավիճակն ու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 340-Լ հրամանը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության <<Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող >> դեպքի արձանագրմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կազմի հիման վրա ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզային օպերատիվ շտաբ (այսուհետ՝ Օպերատիվ շտաբ) համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզային օպերատիվ շտաբի գործողությունների և իրականացվելիք միջոցառումների պլանը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի օպերատիվ շտաբին՝

1) Իրականացնել ստեղծված իրավիճակի վերլուծության, հետևանքների և հակազդման կարողությունների գնահատման, համարժեք արձագանքման և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում հնարավոր իրավիճակ առաջացնող գործոնների կանխման ու հետևանքների վերացման աշխատանքներ, ըստ անհրաժեշտության գործողության մեջ դնել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության պլանի մաս կազմող՝ <<Համաճարակների դեպքում Վայոց ձորի մարզի գործելու պլանը>> և կիրառել սույն որոշման 2-րդ կետով հաստատված պլանով սահմանված միջոցառումները.

2) Ճշտգրտել արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության պլանի մաս կազմող <<Համաճարակների դեպքում Վայոց ձորի մարզի գործելու պլանը>>.

3) Ապահովել <<Վայոց ձորի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին>> ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2013 թվականի թիվ 73 որոշման պահանջները.

4) Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարի 2020 թվականի մարտի 12-ի N 340 L հրամանի N 2 հավելվածով պահանջվող աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ.

4. Հայաստանի Հարապետությանյ Վայոց ձորի մարզի համայնքների ղեկավարներին

1) Ստեղծել համայնքային օպերատիվ շտաբ, անհրաժեշտության դեպքում գործողության մեջ դնել համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը և իրականացնել այդ պլանով նախատեսված համապատասխան գործողություններ.

2) Ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված պլանով սահմանված միջոցառումների իրականացմանը.

3) Համայնքի տարածքում գործող հանրային սպասարկման և ծառայություններ մատուցող կազմակերպություններին իրազեկել աշխատողների անհատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության մասին (իրազեկել վարվելակերպի կանոնների վերաբերյալ, ապահովել ախտահանիչ նյութերով, դիմակներով):

5. Օպերատիվ շտաբի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու իրավասությունը վերապահել օպերատիվ շտաբի պետին կամ վերջինիս հանձնարարությամբ՝ օպերատիվ շտաբի այլ անդամի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օպերատիվ շտաբի անդամների իրազեկման պահից:

Ա. Գրիգորյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի
2020 թվականի մարտի 16 ի N 36 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ

1. Օպերատիվ շտաբի պետ - Վայոց ձորի մարզպետ,
2. Օպերատիվ շտաբի պետի տեղակալ - Վայոց ձորի մարզպետի տեղակալ,
3. ***Օպերատիվ շտաբի անդամներ՝***

1) ՀՀ պաշտպանության նախարարության Վայոց ձորի կայազորի պետ,
2) ՀՀ ազգային անվտանգության ծառայության Վայոց ձորի մարզային վարչության պետ,
3) Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ,
4) ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ,
5) Վայոց ձորի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,
6) Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
7) Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
8) Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ,
9) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ,
10) ՀՀ առողջապահության նախարարության << Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱԿ <<Վայոց ձոր >> մասնաճյուղի տնօրեն,
11) <<Վեոլիա ջուր >> ՓԲԸ արևելք տարածաշրջանի տնօրինության Վայոց ձորի մարզի տեղամասերի պետեր,
12) Հայկական կարմիր խաչի ընկերության Վայոց ձորի մարզային մասնաճյուղի գործադիր տնօրեն:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի
2020 թվականի մարտի 16 ի N 36 որոշման

ՊԼԱՆ

Վայոց ձորի մարզային օպերատիվ շտաբի գործողությունների և իրականացվելիք միջոցառումների

h/h	Միջոցառում	Գործողություններ	Կատարողներ
1.	Լիազոր մարմնի կողմից տեղեկատվության փոխանցում ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն	Յուրաքանչյուր օր, մինչև ժամը 09:00 տրամադրել տեղեկատվություն բուժ հիմնարկներում առկա հիվանդների, սուր շնչառական վարակ ունեցողների վերաբերյալ, իսկ կորոնավիրուսի (COVID-19) կասկածի դեպքում 5 րոպեում (911, 0281-2-23-23)	Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱԿ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ
2.	Զեկույց մարզպետին	Յուրաքանչյուր օր, իրավիճակի վերաբերյալ զեկուցել մարզպետին, իսկ կորոնավիրուսի (COVID-19) կասկածի դեպքում անմիջապես	Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱԿ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ
3.	Առաջարկություն ԱԻ հանձնաժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ	Անհրաժեշտության դեպքում ԱԻ հանձնաժողովի արտահերթ նիստի գումարում	Օպերատիվ շտաբ
4.	Առաջարկություններ համայնքներում բժշկական շտաբների (խմբերի) ստեղծման և սանհիգիենիկ ու բացատրական աշխատանքների իրականացման վերաբերյալ, բնակչության շրջանում բժշկահիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի քարոզչություն	Համայնքներում բժշկական հիմնարկների բազայի հիման վրա ստեղծել բժշկական շտաբներ (խմբեր)	Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ, առողջապահության և սոցիալական ապահովության վարչություններ, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱԿ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ

6.	Առաջարկություններ վարակազերծման միջոցների, անհրաժեշտ բժշկական պարագաների և դեղամիջոցների ձեռքբերման համար		Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ
7.	Հասարակական կարգի պահպանում		ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզայի վարչության պետ
8.	Հնարավոր վարակվածների հաշվառման և հնարավոր կոնտակտավորների հսկողության իրականացում		Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ
9.	Առաջարկություններ հնարավոր վարակվածների բուժ.զննման հնարավորությունների վերաբերյալ		Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ
10.	Առաջարկություններ հնարավոր վարակվածների բժշկական հաստատություններում տեղավորման վերաբերյալ		Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ ԱՆ << Հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոն >> ՊՈԱ <<Վայոց ձոր >> մասնաճյուղ
11.	Թեժ գծի աշխատանքի կազմակերպում		Վայոց ձորի մարզային փրկարարական վարչություն
12.	Ակտիվ համագործակցություն պետական շահագրգիռ կազմակերպությունների միջև		